



ՏՆՕՐԷՆ ԽՄԱԳԻՐ
ԵՒ
ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ
ՆԻԿ. Մ. ԹԻՒՂԵՆՏՅԱՆ

ԽՄԱԳՐԱՏՈՒՆ
Ղալաթիա Բերլինից Բազար
Երսի Խանի Ղեմը Սամուր փոս
Ղոց Թիւ 12

Ա. Ղ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՄԱՐՏԻ 20-ՓՐ ՄԷԹԱԼԻ ԲԱՆԱԿ

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուկրաին

Կ. Պոլսոյ համար

Տարեկան	դր. 100
Վեցամսեայ	» 50
Եռամսեայ	» 25

Գաւառաց համար

Տարեկան	դր. 150
Վեցամսեայ	» 75
Եռամսեայ	» 40

Օտար երկիր տրկն. 40 Յր.բ.

Ա. Ղ.

ՀՐԱԳՐՈՅՑ ձեռքէ ծախուած
թերթին զինն այսօրու ընէ 20
փոյ մէթալիք կամ 25 փոյ պը-
ղինձ ընել որոշուած է :

Ա. Ղ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ընդհ. ժողովն այս ուրբաթ
օր իւր շրջանակիստը փակեալ
հրատարակելէն առաջ, Պատ.
րիարքի և փոխանորդի հրա-
ժարմանց խնդիրներն որպէս թէ
լուծեց և մէկքի ելաւ :

Այս մասին մեր կարծիքն
այն է՝ ինչ որ էր ասկէ 10 օր
առաջ, թէ Պատրիարքը իրօք
քաջուած է գործէ, և մինակ
սահմանադրական պայտօնեայ
պիտի բլայ իզմիրեան սրբազան
և Աղղին միակ ներկայացուցիչը
Դրան առջև, եթէ ինքն ընդու-
նի այս պայտօնը և եթէ Դուռն
ալ վաւերացնէ, որ ատեն Ներ-
սէս Սրբազան բնաւ իրրէ Հա-
յոց Պատրիարք չպիտի կարենայ
երթալ ու դիմել և ոչ տեղ մը :

Ատենապետ բաշան իրեն
յտառել «ճարտարութեամբը»
վարպետութիւն մ'ալ գործեց,
ժողովոյ այս արարքին դէմ Ս.
Պատրիարքին բնիկք բողոքա-
նաց ալ առաջին անունը հա-
մար, միջոց մը՝ զոր ի սկզբան
չէր կրցած մտածել, այն է թէ՛
նորընտիր փոխանորդը՝ ոչ թէ
Ներսէս Պատրիարքին, այլ Հա-
յոց պատրիարքութեան Աթո-
ռոյ փոխանորդ անուանել և Ս.
Պատրիարքն ալ ազգային գոր-
ծող մարմնոց և ոչ մէկուն հա-
մար պատասխանատու յայտա-
բարել տուաւ, որպէս զի Ներ-
սէս սրբազան սոսկ Պատրիարք
անուան տակ մնալով, ընդհ.
ժողովոյ և վարչութեան արարք-
ներուն բնաւ մէկուն ալ խառ-
նուելու իրաւունք չունենայ,
և ժողովոց գործածներուն բնաւ
պատասխանատու չբլայ :

Այսպիսի տարօրինակ պատ-
րիարքական պայտօն՝ դեռ նոր
կտանեմք մեր Աղղ. Սահմա-
նադրութեան առաջը, որոյ բա-
ցէ ի բաց ժխտումն ու հեր-
քումն բռնի է, զի Սահմանադ-
րութեան մէջ այս օրինակ պատ-

րիարքական պայտօն, և այս օ-
րինակ պատր. Աթոռոյ փոխա-
նորդութիւն չկայ :

Չեմք բար թէ այս պայ-
մաններն ըլլալիք բաներ չեն,
կրնան ըլլալ արդարեւ, իսկ խոր-
հըրդարանական ոնէ երկրի մէջ
բնաւ տեսնուած բան չէ որ
վարչութեան մը զլիւսն հան-
գամանքը գծող ու սահմանող
Սահմանադրութեան յօդուածն
առանց փոփոխելու, այդ գըլ-
խոյն պայտօնին հանգամանքը
կարենայ փոփոխել :

Ընդհ. ժողովոյ բրածը ա-
ղէկ բան մ'ալ ըլլալ, դարձեալ
խիստ գէշ և փաստկար սկզբ-
բունք մը հետեւելուն առաջին
քայլն առած կըլլայ, մանաւանդ
որ ժողովը երբ Պատրիարք կո-
չած անձին այսպիսի չէզոքա-
կան հանգամանք և դիրք մը
տալու ըլլալ, պարզապէս անկէ
իր անձնական կարծեաց, համոզ-
ման ու Ինչո՞ւ-Յի իրաւունքը կը
բառնայ, և կամայեմք բարկա-
նի ճանչէմք մը դարձուցած կըլ-
լայ :

Շատեր կ'զարմանան թէ ինչ
բար է որ երբ Ներսէս սրբա-
զան ճես այլիս պատրիարք չեմ,
իսպառ և յաւէտ կ'հրատարակմ
կըսէ, և իրեն դիմողներուն ալ
կապառնայ ուրիշ ատեն իր ներ-
կայութեանը չընդունի զիրենք՝
եթէ այս պատրիարքական խնդ-
րոյն համար իրեն գալու ըլլան,
ինչպէս կըլլայ որ ընդհ. ժողո-
վըն զարձեալ դուռն մեր
պատրիարքն ևս՝ բարկով գոր-
ծը լուծած կ'համարի :

Ասոր զարմանալ պէտք չէ,
Սորա կենդանի մէկ օրինակն
ունիմք աչքերնուս առջևը :

Հակահասունեանք երբ Պա-
պին Բէվէրուրուս կոնդակը
մերժելով բաժնուեցան, Պապը
զսոնք քսան անգամ նզովեց,
բանադրեց, Հոովմէական եկե-
ղեցիէն արտաքսեց, եկեղեցա-

կաններնին դատապարտեց, և և
զանոնք նախ հերձուածող եւ
ապա հերիտիկոս կոչեց :

Իսկ Հակահասունեանք ինչ
բրին. — Երու, րսին Պապին, ըզ-
մեղ ինչքան նոյժես, բանադրես
ու մերժես, մենք դարձեալ ըզ-
քեզ մեր Ս. Պապը կ'ճանչենք,
թէ և զմեզ դու չճանչես, դար-
ձեալ մենք զքեզ պիտի ճան-
չենք և կաթոլիկ պիտի մնանք :
Իրօք ալ այնպէս բրին մինչեւ
յայսօր :

Ասի խելք հասնելու և աք-
րամարանական բեթացք մնէր,
սակայն բրին և շարունակեցին
այդ պէս, ինչու, որպէս զի կա-
րենան ձեռքերնին պահել կամ
ստանալ կաթոլիկ անուան ներ-
քեզ վայելած բոլոր իրաւունք-
նին և առանձնաշնորհնին, զոր
պիտի կորսնցնէին եթէ Պապը
չճանչէին, որ կաթոլիկութենէ
երկը ըսել էր Ուստի և հակա-
հասունեանք այն ատեն կ'տրա-
մարանէին սա պէս, — Պապը
զմեզ չճանչեր, իսկ մեք մեր
ազգային շահուցը համաձայն
չինք գտնել որ մենք ալ չճան-
չինք զինքը, ուստի պիտի շա-
րունակենք ճանչել :

Ճիշդ Հակահասունեանց պէս
կ'խորհի այժմ մեր ընդհ. ժողո-
վըն ալ, Պատրիարքը կ'մերժէ
և չուզեր, իսկ ժողովը կըսէ ի-
րեն — դու ինչքան մերժես և
չուզես, դարձեալ մեր Պատրի-
արքն ևս, — ինչու, — վասն զի
քու հրատարականք ընդունիլը
մեր ազգային շահուց համաձայն
չենք նկատեր, — ինչ է եղեր
այդ ազգային շահը :

Ժողովը խոր լուսթիւն կը
պահէ այդ մասին և չուզեր բա-
ցատրել, իսկ ընթացքը կապա-
ցուցանէ թէ՛ ժողովն ինքն ի-
րեն համար և ի վնաս աղղին
օգուտ և շահ մը ունի ձեռքը
զոր պիտի կորսնցնէ Ներսէս սրբ-
բազանին հրատարականքն ըն-

դունելովը, ուստի այդ շահը չէ
կորսնցնելու համար՝ չուզեր և
չկրնար բնդունիլ նաև Ն. Սըր-
բազանութեան հրատարականք :

Իսկ թող չկարծուի թէ ընդ-
հանուր ժողովոյ դիտած այդ-
շահը ազգային իրաւանց յա-
տուկ շահ մնէ, զի այն ատեն
հարկ կըլլար ենթադրել թէ
Ներսէս սրբազան ալ ազգային
շահուց ի վնաս հրատարելու ե-
լած է :

Սակայն Ն. Սըրբազանութեան
աչխարհածանօթ ազգապիտու-
թիւնը չնեղեր հաւատալ որ նա
ազգային շահուց հակառակ
գործ մը գործէ, այլ այդ շահը
սոսկ հակառակ շահ մնէ, զոր
բնդհ. ժողովը ճանչնի պէս
խաղցնող վարպետ երեսփոխանք
ոմանք աչխոյն շահ անունով կը
պատրուակեն, ծածկելու հա-
մար ժողովը գեան աչքն այն
ուղղութիւնը՝ զոր բունել տալ
կսկսին ազգային գործոց ըն-
թացքին, բուն իսկ հակառակա-
յին շահուց ծառայելով :

ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԻՍ

(Շար. տես թիւ 851)

Այնպիսի Խաւոր ճշմարտու-
թիւններ կան, զորս անկարելի
է յիստտօվանել աստանօր ար-
իւն արտասուք ի յաչկունս . . .

Արդարեւ ինչպէս յուսալ որ
մի բարբարիկ կզեր, ինչպէս
իսկիւտարի ճեմարանի վերա-
սեսուչ քահանայն, աղայ կա-
րենայ կրթել, կ'հարցնեմք, ինչ
լայս ունի մանկան տալու, ինչ
սկզբունք ներշնչելու, ոչ ապա-
քէն մի հինցած ու թթած
գաղափար, մի սահմանափակ
դատողութիւն ժողովուրդը կոյր
ու ազէտ պահելու համար, որ-
պէս զի իրենանց դաւերն ու
խարդաւառութիւնքը լուսոյ
որդիք յերեան չածեն, որպէս
զի իւրեանց ներգութիւնքն
միշտ մութին մէջ քօղարկեալ
մնան անտես :

Ոչ ոչ երկուստարդներ, երբէք չնեղեմք կղերին որ դաստիարակութեան նուիրականութիւնը արհամարհէ, թող չտամք որ այն սիրուն պաշտօնին սրբութիւնը պղծէ: Հասկացնեմք կղերին որ եկեղեցւոյ պատերէն դուրս ոչ գործ ունի ոչ պաշտօն, հետեւապէս չէ կարող կըրօնական տեսակետէն անդին աշխատութիւն ունենալ:

Երբ Պատմաճեան, օրնոտ ասպարէզը կանուանէ վարժապետութիւնը, և կ'անէ թէ, դաստիարակութիւնը պարզապէս գերութիւն մ'եղած է հոս և թերևս այլուր:

Կ'սխալիք, Պատմաճեան էֆ. առանց «թերևս» կրնաք ենթադրել որ դաստիարակութիւնը այլուր, (գերութիւն ալ է, ստրկութիւն ալ է, ծառայութիւն ալ է: Եթէ հող Պոլիս, որ լուսոյ և յառաջդիմութեան աղբիւր ու կեդրոն կ'համարուի, եթէ հող այդպէս է, անկասկած կրնաք հաւատալ թէ դաւառներն ևս առաւել են:

Օրինակ: Ատաբազար քաղաքիս մէջ ազգ. մեծ բաղնիքիքի մը շինութեան ի կատար ելնելը լսած էք անշուշտ, որոյ եկամտով քաղաքին ուսումնարանը պիտի մեծցուէր բարեկարգուէր, սակայն տարաբար դարար ժողովուրդն վիշտ ի սիրտ կ'տեսնէ որ այդ բաղնիքին շինութեան աշխատանքը, տակաւին անկարող կը գտնուի հասարակութեան ամենամեծ բաղձանքն եղած ուսումնարանին համար պէտք եղած հասոյթն պատրաստելու, իսկ թէ իրօք անկարող նշան է բաղնիքն, թէ այնպէս ըրած են զայն ոմանք, այս մասին աւելի ընդարձակ շրջանակի մէջ խօսելու համար ուրիշ առիթ սպասելով, դառնամ իմ խօսքիս:

Բաղնիքին բանեւէն յառաջ կաղն ի կաղն ընթացիւք շարունակող ուսումնարանը, փոխանակ ապահով եկամուտ ունենալուն վրայ հետզհետէ բարեկարգուելու, առաւել ևս վատթարացաւ, մինչև անգամ սեւ ձեռքեր մուտ գտնելով համարձակեցան զայն ևս փակել, որով և մեր պատուարժան դաստիարակն և հոգեծնողն, Գեորգ էֆ. Շիրինեան ստիպուեցաւ մասնաւոր վարժարան բանալ ընդ իւր ունենալով զաշակերտս, բայց յաճտիս գանգատելով թէ, «վարժապետութիւն», կ'նշանակէ հոս 'ձառաջութիւն երկու տարիի շափ ալ շարունակեց իր պաշտօնն այսպէս առարգատիրման, ապա հարկադրեցաւ դադարիլ ասպարէզէն, և հիմա, գրեթէ տարի մը կայ, որ յեշեալ էֆէն:

տին, անգործ կ'ըլլի ի մեծ անպատուութիւն քաղաքացւոյն և ի խոր ցաւ մեր սրտին:

Ոչ միայն այսպիսի, այլ և անոր բազմադիւն քրտանցն տրդար վաստակն եղող 12 1/2 օամ: լիբա պահանջքը (թոշակի մնացորդ) զլացած է նմա նախկին թաղական համախմբութիւնըն վճարել ցարդ ակներև զըրկանք գործելով յիշխարին նըկատմամբ, ըստ որում իւր ըստորադաս պաշտօնակցաց ամսականներն վճարած են նոյն հետայն և ամբողջովին: Ասի անարգ մի վրէժխնդրութիւն է զոր տգիտութիւնը լոյսէն առնուլ կ'կարծէ: . . .

Նոյնպէս մեր մեծարգոյ ընկերակիցներէն մին, Պ. Պողոս ճինճիհանեան, աղքատ ու խեղճ ընտանիքի զաւակ, անհայր ու անմայր, տեսնելով մի քանի աղնուասիրտ անձինք արժան դատեցին զայն Ս. Կարապետ թաղի ազգ. վարժարանն դաստու կարգել, իւր որբութիւնը ծածկել ու ապրեցնել զայն իւր փոքրիկ եղբարց ու քերց հետ: Այլ աւաղ որ զայն ալ գոհ չտեսնելու կարի դըժբաղդութիւնն անխնայ այսօր, որովհետև խեղճն, հացին բաւելուն չափ ալ ստակ չընդունիր, ընդունածն ալ ո'գիտէ մինչև որ աստիճանի ցածնալով, աղբսելով պղտորելով ի մի բան իբր ողորմութիւն մտալով:

Այսպիսի մէկն ինչպէ՞ս կարենայ օրինաւոր դաս տալ աշակերտին, մինչդեռ նա իւր հացն ու զէլթունը, կամ այլ հարկաւոր պիտոյքն հոգալու համար ձեռն ի ծնօտ պիտի մըտածէ ու դարձեալ մտածէ, և այս է վարժապետութիւնը մեր քաղքին մէջ ալ, ո՞հ. . . ըստրուկ բեռնակրութիւնը ատկէ լաւագոյն է քսելու ցաւալի հարկին տակ կ'գտնուի մ'այսօր ակամայ, որ ոչ յիշեալ դպրոցին հոգաբարձութեան պատիւ կը բերէ, ոչ աշակերտելոց ծնողաց ոչ թաղին և ոչ ալ քաղքին:

Ահա այսպէս է, էֆ. դաստիարակութիւնը մեր կողմն ալ կարծեմ չեմք սխալիլ եթէ տեսնեք թէ նոյնպէս են և ամենուրեք: Փափաքելի է մեզ տեսնել որ ժողովուրդեան նոր ու եւանդուն մասը, լուսամիտ և ազատամիտ երիտասարդութիւնը ատել կուզիմ, նետէ իւր անտարբերութեան վերմակն ու բառնայ զայս չարիսն ի միջոյ:

Ա. Յ. Գեորգիան
13/25 մարտ 1879
Ատաբազար

Ամեն Ս. Պատրիարք հայրը երէկ առաւօտ Իտալի եկեղեցին, ի ներկայութեան անթիւ

բազմութեամբ ուկնդրաց, տըռած քարոզին բնաբան ընտրած ըլլալով Աւետարանին այն մասը, որ ըլլայ ձեզ դպրոց և փարիսեցւոց կեդաւարաց քառերովը կսկի, ճարտար բեմբասացութեամբ մը կ'ըստապարտէր եկեղեցական այն կեդաւոր պաշտօնէից ընթացք, որք ժողովուրդին ցոյց տուած ճանբուն հակառակ ճանբու մը մէջ կ'գտնուին իրենք, մանաւանդ այն եկեղեցոյ քահանայապետներն, որք կենաց վերկութեան ճանբուն և Արքայութեան բանալիներն իրենց ձեռքն ըլլալ հռչակելով, ժողովուրդն իրենց ետէն գալ կը հրաւիրեն, և իրենք Արքայութիւն չմտնելէն զամ ժողովուրդն ալ կարգելուն հոգ մը տանելէ:

Թաւարա քարոզին Ս. Պատրիարքը մեր Հայաստանեայց եկեղեցւոյ սրբութիւնը, պարզութիւնը և անարատութիւնը հաստատելով, կ'որդորէի զժողովուրդն Հայոց, որ այսքան ատենէ ի վեր տիրած հեռք, նախանձն, երկպառակութիւնը մէկզի թողուն, և կ'մաղթէր Հայ ժողովուրդը ի մի եկեղեցի, ի մի հօտ և ի մի հովիւ տեսնելու:

Հասունեանց կաթողիկոսարանին մէջ երէկ, փոսն Ս. Պատրի, ու վեհ. Սուրբանին և իւր նախարարաց եղած աղօթից մաղթանքներէն յետոյ, տեղի ունեցած ընդհ. ժողովոյ մէջ, կիմանամք թէ ծանր խռովութիւններ ծագել և մեծ անտեղութիւններ տեղի ունեցեր է, մանրամասնութիւնք վստաւան թելթով:

Հայէպի և Տիգրանակերտի կողմերը բարենորոգմանց հաստատութեանն համար բնորդուած յանձնաժողովոյ երկրորդ լիազօր ֆոմիսէր վսեմ: Նուրեան էֆ. Չրդ կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհուեր է:

Կարնոյ, վանայ և Մշոյ բարենորոգմանց յանձնաժողովոյն երկրորդ լիազօր ֆոմիսէր ընտրուած Աղաբեկեան Սարգիս է. ֆէնտի անուանումն ալ կ'այս հրամանաւ վաւերացուեր է:

Կ. Պոլիս 22 մարտ 79
. . . Տէր Խմբագիր

Կողաչեմք ներկայիւս ծանուցանել ձեր ազգօգուտ Լքրազրով համայն ազնիւ Ազգայնոց, որ Տիգրիկոյ շրջակայ գիւղերէն խուռնափլիայի մէջ 18 տարիէ ի վեր կառուցեալ Լուսաւորչեան վարժարանը վերջին ծայր թշուառութեան և կարօ

տութեան մէջ գտնուելով, հայ մանկութիւնը զուրկ մնացած են դպրոցական կրթութենէ և ուսմանը: Ուստի այս անգամ խեղճ զի գացուոց ճարը հատած, իրենց կարողութեանը շափ ընկերութիւն մը կազմած են, որ կ'ընեն իւր ազնիւ Ազգայնոց ձեռնառութեանը շրջաբերուութեան հանելով Նուիրատուներ հատը 2 գահեկան մէճիտ. առանցմէ դոյացած հասոյթը վե՛րջոյնչեալ գիւղին աղքատիկ մանկըտունն ուսմանը և յառաջագիմութեանը ծառայեցնելու նըպատակաւ: Աներկբայ եմք որ մեր սիրելի Ազգը, որ այսչափ դարերէ ի վեր և ոչ մէկ անգամ մ'ետ կեցած է իւր առաջնուէրները շնորհելէն, այս անգամ ևս պիտի չլրանայ իւր ձեռքնառութիւնը ամենաութելի Ազգիս օգտին և ապագայ սերունդին բարի նպատակներուն համար, ուստի կ'համարձակիմք մեք ստորագրեալքս մեր ազնիւ համազգայններուն զիմելով նուէրներ խնդրել մէկ մէկ ընկալագիր տուականեր տալով: Ի վերջոյ նոյն տուականերէն գոյացած հասոյթը դարձեալ ձեր պատուական Լրագրոյն միջոցաւ հրատարակելով ի գիտութիւն ընդհանուր ազնիւ Ազգայնոց:

Հաճեցէք ուրեմն խուռնաւ վրարնակ ազգայնոց երախտագրտական ջերմ համակրութեան և անկեղծ զգացմանց հաւաստին ընդունել:

Տնօրէն Գանձապետ
Խաչալի Խաչալեան Աւրիս փօռեան

Չմշկածակի մեր պատուարժան թղթակիցը հետեւեալը կը գրէ մեզ մօրտ 2 թուականաւ: Ասկէ առաջ Տէրսիմի քերքաց նկատմամբ տեղի ունեցած զէպրերն պատուական Լրագրոյ միջոցաւ հրատարակուելու համար տեղեկագրած եմ ձեզ, իսկ ժամանակէ մ'ի վեր լուել ստիպուելուս պատճառը ուրիշ բան չէր, բայց միայն այն փոփոխութիւններն որ յաջորդաբար տեղի ունեցան:

Ալի Շէֆիք պէյ սրպէս թէ քերքաց դէմ խիստ վարուած և ալդ աղագաւ Պոլիս կոչուած լինելը՝ արդէն պատ. թերթերէ գործին մէջ ընթերցած, և նոյն ատեն իբրև կարծիք ըմբռնած էինք: Սակայն թուա. կտնէս հինգ օր առաջ Տէրիք Սպարթ բաշա Մաղկերտի հրամանատարութեան պաշտօնով երբ տեղս եկաւ իւր պաշտօնատեղին երթալու, բացորոյ կերպիւ Ալի Շէֆիք պէյի նկատմամբ եղած կարծիքն իրականացոյց թէ արդարև խիստ վարուած է եղեր նա քերքաց դէմ, և այնպէս ձեւացոյց որ քերք

—Վիկթորիա թագուհին անպաշտօնական կերպիւ ուղևորութեան ելած լինելով, Սուրբ թանին կողմէն զինքը ողջունելու համար զրկուելիք ընկած է մաշայի և Հօպարթ բաշայի իտալիա մեկնելն առ այժմ ետ թողուեր է :

—Նիկոմիդիայէն հետեւել հետաքրքրական տեղեկութիւնք կ'ըրեն մեզ :

Անցեալ ուր. (մարտ 16) Պաւլըքէսէրի կողմէն վիճակաւոր զօրքեր Պոլիս գալու վրայ ըլլալով իրենց միազորմին քով սընտուկ մը կար, որոյ մէջ կ'պատուակէր 1-2 տարուան մեռած տղու մը մարմին, անեղծ և անպական Սա դանուած է Պաւլըքէսէրի մէջէն երբ շէնքի մը շինութեան համար հիմ կ'փորեն եղեր, նախ տապանաքարք զըտնուեր է յետոյ մարմինը, և որոյ զլիւսն վրայ ալ բրնձի մը նշանք կար, որ յետնուելով գըլխուն զարնուած էր. տապանաքարէն յայտնուեր է 5-600 տարուան ըլլալը, և հողն ալ հանքային է եղեր, զի ճիշդ նոյն տեղէն կապարի և անագի մետաղ ալ ելեր է. ամբողջ սընտուկը կայարանը կ'ուռուած է 6 հօխա. միազորմը յայտնուեր է ըզսա ուղղակի Սպարապետութեան դուռը և անտի արքունի հնութեանց թանգարանը տանելը ճիշդ կ'մանէր 2-3 ժամ առաջ մեռնողի մը մարմնոյն. մազերը, ակապանքը, եղունքները ճիշդ իրենց տեղը, բայց սա միայն չը կրցինք հասկնալ թէ քրիստոնեայ էր թէ ալլաղք :

ԱԶԳ

ԼՐԱԳՐՈՅՑ ԲՈՒՄՆՈՐԳԱԳԻՆքն թղթագրութեան ոսկեգրամի վերածելու հարկադրուած լինելով, որոշեցինք որ մարտ 15-ն անդին մեր բաժանորդաց իրաւունքն եղած և դեռ ևս բանելիք պայմանաժամու տնօրութիւնն ալ կ'իւրկին զեղյուի :

Իսկ այն բաժանորդք, որոց պայմանաժամն արդէն լրացած ըլլալով ցարդ չեն վճարած եւ կ'չարուեակն տակաւին թերթ տանալ, ասոնք ալ մեր այժմու բաժանորդագրութեան պայմանին համեմատ պարտին ասկերք վճարել իրենց բաժանորդագրինը :

ՇԱՐԳ

ՄՈՒՀԱՐԷՊԷՍԻ ՀԻՔԵԱՅԵՍԻ Հեղինակութիւն

ԱՍՐԳԱՆ ՊԵՏԻ

Սոյն ընտիր պատմութիւնը զոր թերթ առ թերթ կը հրատարակուի կը ծախուի հետեւեալ տեղերը :

Կ. Պոլիս Էմին Էօնի Սուճի Պօղոս աղային խանութը, Բերա Մեծ փողոց ծխալաճառաց խանութները Թարլա-պաշի ծխալաճառ Անտրիաս աղայի խանութը : Մէկ թերթին գինն է 30 փարա մէճիտ : Իսկ մէկ Հատորի բաժանորդագրութեան համար կանխիկ կը վճարուի մէկ արծաթ մէճիտ միայն : Բաժանորդագրութեան տեղին է Կ. Պոլիս Սուլթան-համամ Նշան էֆ. Պէրպէրեանի 4 թիւ փողոցատունը, Բերա Թարլա-պաշի Համակամ զբօսարանը Միհրան Ս. Քիթապեան եւ Էփրան : Ս. րաճխանէ Հարչըք Հաճի Կարապետ Ասատուրեանի խանութը :

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ Թարգմանեալ ի Գաղղիականէն

Կեղրոնատեղքն է Յըրէկեան զրատուելը, զին թերթին 1 շրջ արծաթ :

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԱԶԷՀԱՄԱՐ Գրեց Հ. Գրեգոր Վ. Գովրեկեան Միթ. Ուրաէն

Վիէննա Միթ. Տպարան 1879

Բովանդակութիւն.—Միջին ու Նոր Պատմութիւնը՝ մինչև մեր օրերը հասցընող, համառոտ բայց կատարեալ զեպքերն, մասնաւորապէս ազգ. դպրոցաց գործածութեանը համար շինած է.—Շատ հմուտ զըրութիւն է, ուր յայտնապէս կերակրեց զերմանական ճաշակ ու խորունկ հմուտութիւն.—Ասոր արժէքն այնչափ աւելի մեծ է, որչափ առաջիններէն մէկն է ազգի մէջ, իբրև դասագիրքը Վասն զի թէև կայ հատ մը ասկէ 30 տարի առաջ հրատարակուած, բայց բաց անկէ, որ զուրկ է բոլորովին հաստատուն զրութենէ, շատ ընդարձակ բռնուած է և Պատմութեան հոգին ու ծովը թող տալով, աւելի զուարճալիաց ու զրոյց. ներու միտ դրած է, որ պատմութեան չէ՛ թէ էական, այլ երկրորդական, մասնաւոր թէ երրորդական մասը կ'կազմեցանեն : Ուրիշ այլևայլ տեղեր ու այլևայլ ժամանակ հրատարակուած պատմութեանները ամբողջ չեն, մասնական են և ուսուցիչ չեն գործածութեան մէջ մտնելի զրքեր, հասարակութեան ձեռքը դեռ չեն կրնարնարուիլ.—Ուր թողուէք որ մասն գիրքը, շատ մտադիր հայեցումներով ըրած է նաև աղք. պատմութեան, զոր մինչև մեր օրերը հասած է թուականներու ճշգրտեմամբ Կ'գաննեք ասոր մէջ նաև ազգ. մասնաւորութեան վրայ բաւական տեղեկութիւններ :

ՏՕՔԹԷՐ ՄԿՐՏԻՉ ԱԼԼԱՆԵԱՆ

Երկար տարիներէ ի վեր կուրծքի, սրտի և թոքախտի հիւանդութիւնները իրեն մասնեմբի զընտրած և մեծ փորձառութիւն ստացած ըլլալով յաջողած է սոցոս բժշկութիւնը կատարելագործել, հիմնադրել բուժելով նոյնիսկ երկրորդ կարգի խտտագոյն աստիճանները :

Այս առթիւ պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան որ պատրաստ է մասնաւոր այցելութիւններ բնել հիւանդաց և ամեն օր բնօրնի իրեն զիմող հիւանդները մինչև կէս օր՝ իւր բնակարանը, ի Գաթր գիւղ Մէօհիւրտարձատէօի թիւ 43, ուր ԴՇ. Օրերն ալ ձրի պիտի նայի :

ԾՇ. օրերը պիտի գտնուի Մ. Բէյմուտի ի քի-գարուլը գեղարանը Կ. Պոլիս Սուլթան-Համամ փողոց :

ՀԱՄԱՌՕՏ ԴԻՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Յօրինաց Գրեգոր Մեթեան 82 երեսէ բողոքացեալ և իւր տպարանէն ի լոյս ընծայուած է կրնայ զգրուած մէջ իւր գաստիւրը ծառայել, զինն է 90 սանդիւմ :

Ղալթիա ՇՐ. 24 Մարտ ԸՆԴՀ. ՊԱՐՏ. Ս.ՐԺ.

Բաց	12.38
Դոց	12.37
Բարձր գին	13.00
Յած գին	12.37
Թղթաղ բաւ	բաց 950.00
	բարձր 995.00
	ցած 935.00
ժամը 11	945.00
Փոխ. 63ի	Ֆր. 070.00
» 65ի	» 073.00
» 69ի	» 070.00
» 73ի	» 066.00
Գանձատուում	22.00
Ստիէթէ Ժէնէրալ	4.15
Ստիէթէ Օթօման	3.90
Պանք աը Բօնսթ.	6.10
Գրէտի Ժէնէրալ	5.00
Թրամիէյ	2.60
Բում. կրկաթուղի	44.50
ԸՆԴՊԱՅՐ ԴՐՈՄՈՑ	
(Ո.Տ. 100 ու. 1 հարւ.)	
Անգղ. սակի	109.25
Դաղը	87.18
Բօլ	89.30
Գարպոն արծաթ	16.20
» թղթաղ բաւ	09.00
Գըլմից	51.12
Հինգնոց	11.20
Մէթալիք	12.00
Ճերմակ մէճիտ	05.14
Պղինձ	141.00

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ

ԺՕՁԷՑ ՊԱԼԱՍՄՕ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ ԷՊ. ԵՆՁՄԱՃԵԱՆ Այնչափ ճիշտ գաղղիացի մեծանուն վիպասանին գրչէն ելած սոյն գործին ճրք այն է վերջին հասարակ իրաւորութեան եղբարց տպարանէն ի լոյս բնծայուելով Պոլիս հասած է : Այս գեղեցիկ վեպին մէջ ուր Լուի Ժե. Կեանքը վարքն ու վարքանը նկարագրուած են, հետ զհետ կ'ընկալանան Վոլթէն և Ռուսո՝ անցեալ դարուն այն երկու մեծ մտորելիք, թողուն գիտութիւն. ներ կ'ըստնուեն, Մասօնաց օթեակները օտարին առջև կ'ըստնուեն : Ամեն կարգի և հասակի մարդ իւր սիրած իրիւր հան կ'գտնէ կ'ըն : Կը ծախուի Եէնի ճամբ 21/ի. Կիրէր ճատտէօի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրովաճառաց քով : Գին 2 Ֆրանք 25 սաթ.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԻՏԵԼԻԲ ՈՒ ՊԱՐՏԻՑ ՏՂՈՑ

Բազմոգիւն Մամուրեան էֆի աշխատասիրութեամբ իր ճիշտ ճատտէօն եղբարց տպարանէն ի լոյս ընծայեալ 248 երեսէ բաղկացած պատուական գիրք մէն, որ կրնայ հեղինակին ասկէ առաջ հրատարակած «Նոր ընթերցարան»ին լրացուցիչ մաս համարուիլ և Մայկոյի Բ. Պատր աշակերտաց ծառայելու յոյն գործը բաց ի ամենակարեւոր գիտելիքներէ կ'արարեալէ նաև այնպիսի նիւթեր որք ազգ. մանկուոյն սրտին մէջ ի մատաղ հասակէ հայրենասիրական զգացումներ կը ներշնչեն : Կը ծախուի Եէնի ճամբ 21/ի. Կիրէր ճատտէօի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը, զին 1 1/2 Ֆր :

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ ԹՈՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կը ծախուի Եէնի ճամբ 21/ի. Կիրէր ճատտէօի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրովաճառաց քով :

Գին 1 Ֆրանք

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱՁԱՆ ԳՏՆՈՒԱԾ ՈՒ

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի դեղը բոլորովին բուժող է ներսէն և թէ՛ զուրսէն կը գործածուի ու բազմաթիւ ցաւեր ու հիւանդութիւններ շուտով կը բժշկէ, ինչպէս որ վարը յիշուած է :

Ամեն տեսակ ֆոլի, ըստամոքսի, մէջքի կամ լիզքներու ցաւերու նաև թանք, Բօյքրա և այլ մասունք հիւանդութիւններ ունեցողները այս դեղին խմելու են հետեւեալ կերպով : Կէս զաւաթ ջուրի մէջ, զիւր ապուրի մը զրգալէն աւելի շաքար, վրան լինող անուշիկ զրգալ մը Փանասէ աղէկ մը խառնէ ու խմէ :

Կոկորդի հիւանդութեանց, և Ուռեցքի համար դեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ երկու անուշիկ զրգալ այն բաղադրութեան խմէ : Գօգացաւի, իրմաթիւքի, Ոսքի ցաւի, Ստամոքսի ու տեսակ տեսակ կանաչի ցաւերու համար դուրսէն զանազան քսելով աղէկ մը շիկելու է : Այլապէս ցաւի համար քիչ մը բամպակ փսնասէի մէջ թաթիկով ցաւած ախպային վրայ դնելու է :

Ամեն ատեն երբոր ցաւի մը համար դուրսէն Փանասէ քսել հարկ կը ըլլայ, եթէ քիչ մը ալ խմուի աւելի շուտ բժշկութիւն կը ըլլայ :

Մարմնոյ սպրուած կամ ճմլուած տեղերը բժշկելու համար վրան զը պատահածին պէս Փանասէն վրան աղէկ մը լինելու է : Գտնաւ կող լին. կտրուած վերքերը բժշկելու համար՝ արեւը շարժած շուտով մը վերքը կապելու և կապին վրայէն Փանասէ լինելու է մինչև որ լաւ մը թրջի : Փանասէն նաև արեան շրջանը կարագացնէ ու բոլոր թնութիւնը կը բորացնէ :

Այս դեղին օգտակարութեանը վրայ երկար էն գրել աւելորդ կը համարեմք, դործածողները զայն միշտ կը գտնեն, ուզողը կրնայ անհամար փորձել. զինն ատան է : Կը ծախուի Միմասեան և Ընկերաց Ս. մերիկեան վաճառատունը որ ի Ղուկասեան Կ. Պոլսոյ

ԲԱՆԱԼԻ ՀԱՅՏԵՐԵՆ ԵԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ահաւաստիկ գեղեցիկ մեթոտ մը Մամուրեան էֆի աշխատասիրութեամբ մուտ գտնելով մայրենի լեզուի ուսման մէջ, կ'աւանդողէ աշակերտները շարադիր լինելու, շուտով արտասիրելու քերականութեան տաղակալի շրջանէն անցնին :

Այս գրքիւն Չմիւռնից Տէտեանեղբարց տպարանէն ի լոյս ընծայուելով կը ծախուի Եէնի-ճամբ 21/ի. Կիրէր ճատտէօի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրովաճառաց քով : Գին 50 սանթիկ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՆԻԿ.Մ. ԹԻԼԻՊԷՆՃԵԱՆ